



Ներածություն

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

Գլուխ 2. Փաստաբանի հարաբերությունը վստահորդի հետ հանձնարարությունն ընդունելու փուլում

Գլուխ 3. Փաստաբանի և վստահորդի փոխհարաբերությունները հանձնարարության կատարման փուլում

Գլուխ 4. Փաստաբանի փոխհարաբերությունները դատավարության մասնակիցների հետ մինչդառնական վարույթում և դատարանում

Գլուխ 5. Փաստաբանների միջև հարաբերությունները

Գլուխ 6. Փաստաբանի հարաբերությունները Պալատի հետ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ  
'18' փետրվարի 2006թ.

## Հայաստանի Հանրապետության Փաստաբանների Պալատ

### Փաստաբանի Վարքագծի Կանոնագիրք

ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան  
2006թ

### Փաստաբանի վարքագծի կանոնագիրք

Ներածություն

Հայաստանի Հանրապետության Փաստաբանների Պալատը

նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ մարդ անհատն ու նրա արժանապատվությունը հոչակված են որպես բարձրագույն արժեք,

նկատի ունենալով, որ մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, որպես նրա արժանապատվության անքակտելի հիմքն ու բովանդակությունը, կարող են պաշտպանվածության երաշխիք ունենալ միայն երկրում պատշաճ մակարդակի փաստաբանական ծառայության առկայության պայմաններում,

հիմք ընդունելով երկրում փաստաբանության ձևավորված ավանդույթներն ու առաջադեմ

փորձը, ելնելով նաև Իրավաբանների Եվրոպական ընկերակցության կողմից ընդունված վարքագծի կանոններում ամրագրված սկզբունքներից,

միասնական կամաարտահայտմամբ ընդունում են փաստաբանի վարքագծի սույն կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք), որում ամրագրված սկզբունքների նկատմամբ հարգանքն ու դրանց պահպանումը պարտադիր են Հայաստանի Հանրապետության Փաստաբանների Պալատի (այսուհետ՝ Պալատ ) բոլոր անդամ փաստաբանների համար:

Սկիզբ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

### Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

#### Հոդված 1. Կանոնագրի հարաբերակցությունը Փաստաբանության մասին ՀՀ օրենքին

1. Սույն Կանոնագիրքը չի փոխարինում Փաստաբանության մասին օրենքով ամրագրված դրույթներին, այլ լրացնում և ապահովում է դրանց պահանջների պատշաճ կատարումը:
2. Սույն Կանոնագիրքը սահմանում է Փաստաբանության մասին ՀՀ օրենքով, Պալատի Կանոնադրությամբ և այլ օրենսդրական ակտերով նախատեսված փաստաբանների իրավունքների ու պարտականությունների իրականացման ուղղված գործողությունների միասնական վարքագծի կանոններ:

#### Հոդված 2. Կանոնագրի գործողությունը

1. Սույն Կանոնագիրքը գործողության մեջ է դրվում այն ընդունելու պահից և գործում է դրանից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. Սույն Կանոնագրի նորմերը տարածվում են՝

- 1.1 Հայաստանի Հանրապետության Փաստաբանների Պալատի բոլոր անդամների վրա անկախ նրանց գտնվելու և գործունեության վայրի,
- 1.2 փաստաբանի մասնագիտական և սույն Կանոնագրքով նախատեսված այլ գործունեությունների վրա:

#### Հոդված 3. Կանոնագրի մեկնաբանությունը

1. Սույն Կանոնագիրքի մեկնաբանման իրավունքը պատկանում է բացառապես Պալատի խորհրդին:
2. Եթե որոշակի հանգամանքներում անհրաժեշտություն է առաջանում սույն Կանոնագրքի նորմերի մեկնաբանության կամ պարզաբանման համար, ապա փաստաբանը կարող է դիմել Պալատի խորհրդին պարզաբանում ստանալու համար:

#### Հոդված 4. Կանոնագրում օգտագործվող հասկացությունները

1. Սույն Կանոնագրքում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

. վստահորդ՝ անձր, ում իրավունքները և շահերը սահմանված կարգով պաշտպանում, ներկայացնում կամ գործող օրենսդրությամբ նախատեսված այլ իրավական օգնություն է ցույց տալիս փաստաբանը,  
. Փաստաբանական գրասենյակ՝ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կարգավաճակ ունեցող փաստաբանի հիմնադրած գրասենյակ:

#### **Հոդված 5. Օրինապահության սկզբունքը**

Իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պարտավոր է՝ հետևել ՀՀ գործող օրենսդրությամբ, Պալատի կանոնադրությամբ և սույն Կանոնագրքով սահմանված նորմերի պահանջներին, լինել սկզբունքային և օրինապահ, հարգել իրեն դիմած վստահորդի իրավունքները, օրինական շահերը, պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը:

#### **Հոդված 6. Անկախության սկզբունքը**

1. Փաստաբանի մասնագիտական անկախությունը նրա պարտականությունների պատշաճ կատարման անհրաժեշտ նախապայմանն է:
2. Փաստաբանը չպետք է զբաղվի՝ Փաստաբանության մասին՝ ՀՀ օրենքին և սույն Կանոնագրքին հակասող գործունեությամբ:
3. Փաստաբանը ցանկացած գործով կարող է ներկայացնել վստահորդի շահերը, որը չի նշանակում, թե նա ընդունում է վստահորդի քաղաքական, տնտեսական, հասարակական, բարոյական, կրոնական հայացքները կամ գործունեությունը:

#### **Հոդված 7. Կոմպետենտություն**

1. Փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:
2. Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:
3. Փաստաբանը պարտավոր է շարունակաբար պետք է շարունակաբար կատարելագործել իր գիտելիքներն ու մասնագիտական հմտությունը, հետևել օրենսդրության փոփոխություններին:

#### **Հոդված 8. Հարգանքը փաստաբանի մասնագիտության նկատմամբ**

1. Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության հասարակական կոչման, նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:
2. Փաստաբանը իր գործունեության ընթացքում պետք է զերծ մնա փաստաբանի կոչումից:

ու հեղինակությունը անվանարկող գործողություններից:

3. Փաստաբանը պարտավոր է կատարել Պալատի մարմինների՝ իրենց իրավասության սահմաններում ընդունած որոշումները, ինչը չի բացառում դրանց նկատմամբ քննադատական վերաբերմունք ունենալը ու օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դրանց բողոքարկումը:

### **Հոդված 9. Փաստաբանական գաղտնիք**

1. Փաստաբանական գաղտնիք է համարվում այն տեղեկությունները, որոնք վստահորդը փոխանցել է փաստաբանին, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները, որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն, և որոնք հայտնի չեն հանրությանը:

2. Արգելվում է փաստաբանին որպես վկա հարցաքննել այն հանգամանքների վերաբերյալ, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ:

3. Փաստաբանը կարող է հրապարակել փաստաբանական գաղտնիքը, եթե՝

3.1. առկա է վստահորդի գրավոր համաձայնությունը,

3.2. դա անհրաժեշտ է նրա և վստահորդի միջև ծագած դատական վեճում պահանջները հիմնավորելու կամ իր պաշտպանության համար,

3.3. առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն:

4. Փաստաբանական գաղտնիքի պահպանման պարտականությունը չի սահմանափակվում ժամանակի մեջ

### **Հոդված 10. Փաստաբանի և փաստաբանական գրասենյակի գործունեության գովազդման առանձնահատկությունները**

1. Փաստաբանը և փաստաբանական գրասենյակը իրավունք ունեն գովազդելու իրենց մասնագիտական գործունեությունը՝ գործող օրենսդրության, ինչպես նաև սույն Կանոնագրքի պահանջների պահպանմամբ:

2. Փաստաբանի և փաստաբանական գրասենյակի մասնագիտական գործունեության մասին գովազդային նյութերը չեն կարող պարունակել՝ համեմատություններ այլ փաստաբանների և փաստաբանական գրասենյակի հետ, ինչպես նաև առաջարկվող աշխատանքի արդյունքի երաշխավորում:

3. Եթե փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) գովազդային նյութերում նշվում են՝ իրավական օգնության ցույց տալու պայմանները, ապա փաստաբանը պարտավոր է իրավական օգնության տրամադրումը ապահովել գովազդում նշված պայմաններին խստիվ համապատասխան:

### **Հոդված 11. Փաստաբանի գործունեության հրապարակայնությունը և ՋԼՄ-ների հետ փաստաբանի համագործակցության սահմանները**

1. Փաստաբանը, որը քրեական գործով ներկայացնում է իր վստահորդի շահերը, մինչև նախաքննության ավարտը իրավունք ունի հրապարակել նախաքննության տվյալները միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:

2. Փաստաբանը չպետք է հրապարակային դարձնի այն տեղեկությունները, որոնք իրեն հայտնի են դարձել կոնկրետ գործով և որոնք կապված են այլ անձանց անձնական կյանքի, հանրության բարքերի, հասարակական կարգի և պետական անվտանգության հետ:

3. Քրեական գործերով մինչև նախաքննության ավարտը փաստաբանը իրավունք ունի հրապարակել զանգվածային լրատվական միջոցներով հետևյալ տեղեկությունները`

2.1 քրեական գործի ընդհանուր բնույթը և քրեական գործով հարուցված հայցի բովանդակությունը,

2.2 գործի ընթացքի վերաբերյալ հետևյալ ընդհանուր տեղեկություններ`

հանցագործության բացահայտման, արարքի որակման, վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ տված խախտումների, իսկ վստահորդի համաձայնությամբ նաև տեղեկություններ վստահորդի բնակության, աշխատանքի, ընտանեկան դրության, վստահորդի կալանավորման դեպքերում , տեղեկություններ կալանավորման հիմքերի մասին:

4. Փաստաբանը կարող է դիմել ՋԼՄ-ների օգնությանը հայտնաբերելու համար տվյալ գործով տեղեկությունների տիրապետող անձանց:

Սկիզբ

## ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

### **Գլուխ 2. Փաստաբանի հարաբերությունը վստահորդի հետ հանձնարարությունն ընդունելու փուլում**

#### **Հոդված 12. Փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու հիմունքները**

Փաստաբանն իրավական օգնություն է ցույց տալիս Փաստաբանության մասին՝ ՀՀ օրենքի համաձայն՝ վստահորդի հետ կնքած իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագրի հիման վրա կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ նշանակմամբ:

#### **Հոդված 13. Վստահորդի հանձնարարության ընդունման պայմանը**

1. Եթե վստահորդի հանձնարարությունը և նրա համար ցանկալի արդյունքի հասնելու միջոցները օրինական չեն, ապա փաստաբանը պետք է վստահորդին պարզաբանի դրանց կիրառման անթույլատրելիության մասին և ցույց տա նույն կամ նման արդյունքի հասնելու հնարավոր օրինական ճանապարհը, և եթե այդուհանդերձ չի հաջողվում վստահորդի հետ համաձայնության գալ և նրան հետ պահել անօրինական միջոցների կիրառման մտադրությունից, ապա փաստաբանը պարտավոր է հրաժարվել վստահորդի հանձնարարությունը ընդունելուց:

2. Իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունն ընդունելիս փաստաբանը պետք է նկատի ունենա այն կատարելու իր մասնագիտական հնարավորությունները և պարտավոր է հրաժարվել հանձնարարությունն ընդունելուց, եթե պարզում է, որ սույն Կանոնագրքով ներկայացվող պահանջները իր կողմից չեն կարող պահպանվել:

3. Փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է

ընդունի, եթե գրադվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

4. Փաստաբանը չի կարող ընդունել վարույթն իրակականացնող մարմնի պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի վարման հետ կապված իրավական օգնություն ցույց տալու հանձնարարություն:

#### **Հոդված 14. Հանձնարարության ընդունման փուլում փաստաբանական գաղտնիքի սկզբունքի պահպանումը**

1. Փաստաբանը չի կարող ընդունել այնպիսի հանձնարարություն, որի կատարմամբ կարող է խախտվել մի այլ գործով կամ նույն գործով այլ վստահորդի փաստաբանական գաղտնիքի սկզբունքը, եթե չկա այդ վստահորդի գրավոր համաձայնությունը:
2. Հանձնարարությունից հրաժարվելու դեպքում փաստաբանը պարտավոր է պահպանել վստահորդի հետ համաձայնությունն ընդունելու բանակցությունների ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

#### **Հոդված 15. Գործով իրավական դիրքորոշմանը վստահորդին տեղեկացնելը**

1. Այն դեպքում, երբ փաստաբանը պարզում է հանձնարարությունը կատարելու համար փաստացի և իրավական հիմքերի բացակայությունը, պարտավոր է այդ մասին հայտնել վստահորդին և առաջարկել հանձնարարության կատարման այլ տարբերակներ, որոնցով հնարավոր է հասնել ակնկալվող արդյունքին: Փաստաբանի և վստահորդի միջև համաձայնություն ձեռք չբերելու դեպքում փաստաբանը պարտավոր է հրաժարվել հանձնարարությունն ընդունելուց:
2. Փաստաբանը՝ իր մասնագիտական պարտավորությունների բարեխիղճ և որակյալ կատարումից բացի, այլ երաշխավորություններ չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից:

#### **Հոդված 16. Հանձնարարությունն ընդունելը բացառող հանգամանքները**

1. Փաստաբանը իրավունք չունի ընդունել հանձնարարությունը, եթե տվյալ գործով մասնակցող պաշտոնատար անձանց հետ գտնվում է ազգակցական կապերի մեջ:
2. Փաստաբանը իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի՝ նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա: Նշված դեպքում փաստաբանը հանձնարարությունը կարող է ընդունել միայն վստահորդի գրավոր համաձայնության պայմանով:
3. Փաստաբանը իրավունք չունի ընդունել հանձնարարությունը, նաև՝ Փաստաբանության մասին ՀՀ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

#### **Հոդված 17. Պայմանագրի կնքման պայմանները**

1. Վստահորդի հետ պայմանագիր կնքելուց փաստաբանը պետք է պարզի, թե արդյոք վստահորդը մեկ այլ փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) հետ չի± կնքել նույնպիսի կամ նույնական պայմանագիր:
2. Եթե պարզվում է, որ վստահորդը այլ փաստաբանի հետ կնքել է նույնպիսի կամ

նույնական պայմանագիր, ապա փաստաբանը կարող է ընդունել հանձնարարությունը՝ միայն սույն Կանոնագրքի 18-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ՝ կամ նախորդ փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) հետ սույն կանոնագրքով սահմանված կարգով պայմանագիրը լուծելուց հետո:

**Հոդված 18. Մեկից ավելի փաստաբանների կողմից հանձնարարությունն ընդունելը**

1. Վստահորդի ցանկությամբ կամ նրա համաձայնությամբ թույլատրվում է մեկից ավելի փաստաբանի մասնակցությունը նույն գործով: Այդ դեպքում պայմանագրով կարող են նախատեսվել և բաշխվել հանձնարարությունը կատարող փաստաբանների պարտավորությունները, լիազորությունները և գործողությունների շրջանակը:
2. Այն դեպքում, երբ վստահորդը կոնկրետ փաստաբանի հետ իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր կնքելուց հետո, առանց նրա հետ համաձայնեցնելու մեկ այլ փաստաբանի հետ կնքում է նույն հանձնարարության հետ կապված պայմանագիր, ապա փաստաբաններից յուրաքանչյուրը, որը տեղեկացված չէ այլ փաստաբան ներգրավելու մասին իրավունք ունի հրաժարվել իր հետ կնքված պայմանագրից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով արգելվում է փաստաբանին իրավաբանական օգնություն ցույց տալուց հրաժարվելը:

**Հոդված 19. Այն անձինք, որոնցից փաստաբանը կարող է ընդունել իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը**

1. Փաստաբանը իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը կարող է ընդունել անմիջապես վստահորդից, պայմանագիրը կնքելու համար նրա կողմից լիազորված ներկայացուցչից, անչափահաս կամ անգործունակ (սահմանափակ գործունակ) վստահորդի օրինական ներկայացուցչից, կասկածյալի կամ մեղադրյալի ազգականից, կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանցից, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում Պալատի նշանակմամբ:
2. Երբ հանձնարարությունը անմիջականորեն վստահորդից չի ընդունվել, փաստաբանի կողմից իրավական օգնությունը ցույց է տրվում միայն վստահորդի համաձայնությամբ ստանալուց հետո:

Սկիզբ

**Գլուխ 3. Փաստաբանի և վստահորդի փոխհարաբերությունները հանձնարարության կատարման փուլում**

**Հոդված 20. Հանձնարարության կատարման փուլում օրինականության պահպանման սկզբունքը**

1. Վստահորդի հանձնարարությունը կատարելու ընթացքում փաստաբանին չի թույլատրվում օգտվել օրենքով արգելված միջոցներից:
2. Փաստաբանը պարտավոր է հրաժարվել իրավական օգնության ցույց տալու պայմանագրից, եթե իր կողմից տվյալ վստահորդին իրավական օգնություն ցույց տալը,

հանձնարարության կատարման փուլում, հակասում է սույն Կանոնագրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, 16-րդ հոդվածի 1-ին մասի և 17 հոդվածի պահանջներին:

3. Փաստաբանը իրավունք չունի վստահորդի դիրքորոշմանը հակառակ դիրքորոշում ընդունել, նրա հետ այդպիսի համաձայնություն չունենալու դեպքերում, մասնավորապես քրեական գործերով փաստաբանը իրավունք չունի իր պաշտպանյալի մեղքն ապացուցված ճանաչել, եթե վերջինս իրեն մեղավոր չի ճանաչում, ինչպես նաև իրավունք չունի դրդել կամ համոզել նրան իրեն մեղավոր ճանաչել:

4. Համոզվելով, որ պաշտպանյալին մեղսագրվող արարքը հիմնավորված չէ կամ գործով ձեռք բերված ապացույցները վկայում են ավելի թեթև հանցագործության մասին, իսկ պաշտպանյալն ընդունում է իրեն ներկայացված մեղադրանքը, փաստաբանը պարտավոր է քննարկել այդ հարցերը իր պաշտպանյալի հետ և համաձայնեցնել ըստ այդմ նոր դիրքորոշում ընդունելու հարցը: Եթե նոր դիրքորոշման կապակցությամբ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա փաստաբանն իրավունք ունի զբաղեցնել իր պաշտպանյալից անկախ, ինքնուրույն դիրքորոշում:

### **Հոդված 21. Հանձնարարության կատարման փուլում վստահորդի փաստաբան ընտրելու իրավունքը**

1. Փաստաբան ընտրելու իրավունքը պատկանում է վստահորդին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
2. Փաստաբանը չի կարող առանց վստահորդի համաձայնության, հանձնարարության կատարումը ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցել այլ փաստաբանի:
3. Հանձնարարության կատարմանն այլ փաստաբանների ներգրավվումը թույլատրվում է վստահորդի համաձայնությամբ, սույն Կանոնագրքի պահանջների պահպանմամբ միայն:

### **Հոդված 22. Հանձնարարության կատարման ընթացքի մասին տեղեկացումը**

1. Փաստաբանը պարտավոր է կանոնավոր կերպով տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:
2. Վստահորդը իրավունք ունի ցանկացած ժամանակ փաստաբանից ստանալ գործի վերաբերյալ իրեն հետաքրքրող ցանկացած տեղեկություն:

### **Հոդված 23. Իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագրի ձևը**

1. Իրավական օգնություն ցույց տալու համար փաստաբանի և վստահորդի միջև կնքվում է գրավոր պայմանագիր:
2. Իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը կարող է կնքվել բանավոր՝ եթե գրավոր պայմանագրի կնքումը հնարավոր չէ՝ վստահորդին անհետաձգելի իրավաբանական օգնություն տրամադրելու անհրաժեշտության կամ այլ պատճառով: Այդ դեպքում գրավոր պայմանագիրը կարող է կնքվել իրավաբանական օգնություն ապահովելուց հետո ողջամիտ ժամկետում:

### **Հոդված 24. Հոնորարը և հոնորարի վճարման կարգը**

1. Հոնորարը՝ պայմանագրով նախատեսված իրավական օգնություն ցույց տալու համար

փաստաբանին վճարվող գումարն է:

2. Հնոտրարի չափը որոշվում է փաստաբանի և վստահորդի փոխադարձ համաձայնությամբ, որում կարող է հաշվի առնվել՝ աշխատանքի ծավալը և բարդությունը, կատարման համար անհրաժեշտ ժամանակի տևողությունը, փաստաբանի փորձը և որակավորումը, ժամկետները, կատարվող աշխատանքի հրատապության աստիճանը և այլ հանգամանքներ:

3. Հնոտրարը վճարվում է իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը կնքելու պահին, եթե պայմանագրով այլ կարգ չի նախատեսվում:

4. Հնոտրարի չափը կարող է փոփոխվել պայմանագրով փաստացի ստանձնած պարտավորությունների ծավալի փոփոխմանը համաչափ, ինչպես նաև հանձնարարության կատարման ժամկետների, վստահորդի նոր կամ լրացուցիչ առաջադրանքի հետ կապված, եթե դրանք ընդունվում են փաստաբանի կողմից կամ առանց դրանց հիմնական հանձնարարությունը կատարել հնարավոր չէ:

### **Հոդված 25. Հանձնարարության կատարման հետ կապված այլ ծախսեր**

1. Փաստաբանը իրավունք ունի, բացի հոտրարից, վստահորդից պահանջել և ստանալ նաև այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են հանձնարարության կատարման համար (ներգրաված մասնագետների աշխատանքի վարձատրությունը, տրանսպորտային ծախսերը, տպագրության, պատճենահանման, թարգմանության, նոտարական, հեռախոսային խոսակցությունների և այլ ծախսեր):

### **Հոդված 26. Իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի լուծումը**

1. Իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագիրը փաստաբանի և վստահորդի փոխադարձ համաձայնությամբ կարող է լուծվել ցանկացած պահի:

2. Վստահորդը իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից, փաստաբանի փաստացի կատարած աշխատանքի համար վճարելու պայմանով: Փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք որևէ կերպ կարող են խոչընդոտել վստահորդի այդ իրավունքի իրականացմանը:

3. Փաստաբանը, եթե օրենքը չի արգելում, իրավունք ունի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հետևյալ հիմքերով՝

3.1 վստահորդը փաստաբանի պարզաբանումների հակառակ կատարում է հանձնարության հետ կապված գործողություններ, որոնք օրենքով արգելված են,

3.2 վստահորդը պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնարին նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,

3.3 վստահորդը թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,

3.4 հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողությունների կատարելու հետևանքով,

3.5 վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը անվանարկող գործողություններ,

3.6 վստահորդը հրաժարվում է կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:

4. Փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից

հրաժարվելու դեպքերում, փաստաբանը պարտավոր է բացատրել վստահորդին իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից հրաժարվելու պատճառները և գերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել վստահորդի շահերին:

**Հոդված 27. Պայմանագիրը լուծելիս փաստաբանի պարտականությունները**

1. Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝
  - 1.1 վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել՝ եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ,
  - 1.2 վերադարձնել հանձնարարության կատարման հետ կապված ծախսերի հատուցման համար նախատեսված և չծախսված միջոցները,
  - 1.3 վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված փաստաթղթերը, իսկ վստահորդի պահանջի դեպքում նաև իր կողմից կազմված կամ իր մոտ պահվող վստահորդի գործին վերաբերվող բոլոր փաստաթղթերի պատճենները,
2. Սույն հոդվածը չի տարածվում վստահորդի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումից հրաժարվելու հիմքով փաստաբանի կողմից պայմանագրի հրաժարվելու դեպքերի վրա:

**Հոդված 28. Հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանների վարքագծի կանոնների առանձնահատկությունները**

1. Գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում պաշտոնատար անձանց որոշման հիման վրա, Պալատի կողմից կամ առանց նման որոշման, սակայն Պալատի նախաձեռնությամբ նշանակված փաստաբանը (հանրային պաշտպանը) պարտավոր է ստանձնել հանձնարարության կատարումը:
2. Հանրային պաշտպանը իրավունք ունի հրաժարվել վստահորդի շահերը ներկայացնելուց սույն Կանոնագրի 16 հոդվածով նախատեսված դեպքերում միայն:
3. Նշանակմամբ իրավաբանական օգնությունը կարող է ցանկացած փուլում փոխարինվել վճարմամբ իրավաբանական օգնությամբ հանրային պաշտպանի գրասենյակի կանոնագրով սահմանված կարգով:

Սկիզբ

**Գլուխ 4. Փաստաբանի փոխհարաբերությունները դատավարության մասնակիցների հետ մինչդական վարույթում և դատարանում**

**Հոդված 29. Փաստաբանի փոխհարաբերությունները հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազի, դատավորի և դատավարության մյուս մասնակիցների հետ**

1. Վստահորդի շահերը մինչդատական վարույթում և դատարանում ներկայացնելու ընթացքում, փաստաբանի գործողությունները պետք է համապատասխանեն

դատավարության օրենսգրքերի, Փաստաբանության մասին՝ օրենքի, Պալատի Կանոնադրության, սույն Կանոնների, ինչպես նաև դատավարության մասնակիցների վարքագիծը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներին:

2. Մինչդատական վարույթում և դատաքննության ընթացքում փաստաբանն իրավունք չունի<sup>a</sup>

2.1 օրենքով արգելված միջոցներով ազդել տվյալ գործով վարույթ իրականացնող մարմնի վրա,

2.2 մինչդատական վարույթում և դատական նիստում խախտել օրենքով սահմանված վարման կարգը, թույլ տալ դատարանի և դատավարության մյուս մասնակիցների պատիվն ու արժանապատվությունը վիրավորող արտահայտություններ:

3. Մինչդատական վարույթում և դատական քննության ընթացքում փաստաբանը պարտավոր է՝

3.1 հարգանքով վերաբերվել դատավարության մասնակիցների նկատմամբ և մնալ կոռեկտության շրջանակներում,

3.2 դատարանի և դատավարության մասնակիցների գործողություններին կամ ոչ կոռեկտ արտահայտություններին անդրադառնալ օրենքով սահմանված եղանակներով՝ դիմումների, հայտարարությունների, միջնորդությունների, բացարկների, առարկությունների կամ բողոքների միջոցով,

3.3 Դատավորի կողմից դատավարական նորմերի խախտման, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոնադրի խախտման դեպքերում փաստաբանը կարող է ներկայացնել առարկություններ և անհրաժեշտության դեպքում դիմել Արդարադատության խորհրդին ու այլ իրավասու մարմիններին:

### **Հոդված 30. Դատարանում հանձնարարությունը կատարելու ուղղված փաստաբանի գործողությունները**

1. Դատական քննության ժամանակ փաստաբանը պարտավոր է օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանել իր վստահորդի շահերը՝ կատարելով բոլոր անհրաժեշտ դատավարական գործողությունները՝ գործին առնչվող ապացույցների ձեռք բերման և հետազոտման համար:

2. Փաստաբանը պետք է աշխատի դատավարական փաստաթղթերը, դիմումները, միջնորդությունները, բացարկները, հայտարարությունները, ելույթները ձևակերպել՝ զրազետ, հիմնավոր և հստակ:

3. Փաստաբանը չպետք է խոչընդոտի օրենքով սահմանված կարգով վեճի լուծմանը հաշտության համաձայնությամբ, եթե այն բխում է նաև իր վստահորդի շահերից:

Մկիգբ

## **Գլուխ 5. Փաստաբանների միջև հարաբերությունները**

### **Հոդված 31. Փաստաբանների միջև հարաբերությունների ընդհանուր հիմունքները**

1. Փաստաբանների միջև հարաբերությունները պետք է կառուցվեն փողադարձ հարգանքի և փաստաբանների մասնագիտական համերաշխության սկզբունքների հիման վրա:

2. Փաստաբանը չպետք է՝

2.1 թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ,

2.2 վստահորդին դրդել այլ փաստաբանի հետ ունեցած իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագրից հրաժարվելուն,

2.3 վստահորդի հետ քննարկի այլ փաստաբանի՝ անձնական կյանքին, նյութական վիճակին, մասնագիտական հմտություններին, հանձնարարության վարձատրության պայմաններին վերաբերող և հանձնարարության կատարման հետ չառնչվող այլ հանգամանքներ,

Սկիզբ

## **Գլուխ 6. Փաստաբանի հարաբերությունները Պալատի հետ**

### **Հոդված 32. Կանոնագրքի խախտման իրավական հետևանքները**

1. Կանոնագրքի պահանջների խախտման համար, փաստաբանը՝ Փաստաբանության մասին ՀՀ օրենքով և Պալատի Կանոնադրությամբ նախատեսված կարգով կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

2. Փաստաբանի օգնականի կամ փորձակի կողմից Կանոնագրքի պահանջների խախտման համար փաստաբանի պատասխանատվությունը

Փաստաբանի օգնականի կամ փորձակի կողմից Կանոնագրքի պահանջների խախտման համար փաստաբանը կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել, եթե՝

2.1. նա ժամանակին չի օգնականին կամ փորձակին չի ծանոթացրել սույն Կանոնագրքի հետ,

2.2. փաստաբանի և վստահորդի միջև իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված հանձնարարության առանձին աշխատանքների կատարման համար իր կողմից ներգրավված օգնականի կամ փորձակի գործողությունների նկատմամբ պատշաճ հսկողություն չի իրականացրել:

Սույն կանոնագիրքը ընդունվել և հաստատվել է 18.02.06թ.-ի փաստաբանների Պալատի ընդհանուր ժողովի կողմից և գործողության մեջ է դրվում այդ օրվանից: